են «Աբրահամ սրբոյ կաթուղիկէի վանից երէց», այսինքն էջմիածնի, «Սամուէլ սրբոյ Հռիփսիմէի, Բարիլաս (Բարեղաս) սրբոյ Յոհաննու վանաց, Խոսրով Աւշականու, Յաւիտեան Աղիվարդայ, Դաւիթ Երեւանայ, Իսմայէլ Գառնոյ, Յունանէս Աւանի, Իսրայէլ Պողավանից, Զօջիկ Արամունից (Թղ. Երեւանից), Յոհանիկ Արտաւազդայ ապարանից, Արաս եւ Որդեակ եւ Աբրահամ Փարպիոյ, Միքայէլ Աղցից, Գորգիս, Ուխտանէս, Գրիգորիս Արճոյ, Կոզմաս Ուրդայ, Մայէն միւս Արճոյ, Յոհանիկ Արծափայ, Սիմոն Դաստաւանից, Ուխտանէս Դարունից, Սամոս Բագարանի եւ այլ վանից երիցամբ հանդերձ:»*

Այս ցանկը մեր առաջ դնում է մի զարմանալի իրողութիւն, որ հայ ճարտարապետական արուեստի մասնագէտների ուշադրութեան կը մատուցանէինք. Նախ այստեղ յիշուած եկեղեցիների մեծ մասը բազիլիկ եկեղեցիներ են, որոնց մնացորդներն ունինք մենք: Յոհաննայ վանքի ներկայ շինութիւնը ԺԳ. դարի ստեղծագործութիւն է, բայց նորա հիւսիսային կողմը կայ մի նաւանի եկեղեցի, որի մի քանի նշաններից պարզ է, թէ նա Է. դարից առաջ հիմնուած մի շէնք է, մեծ նորոգութեան ենթարկուած, բայց եւ հնագոյն մնացորդներով, որպիսին մուտքի կողասիւներն են (Պատկ. 11)** եւ ներսից պայտաձեւ կամարի մի մնացորդ, որ մեր հին եւ բազալիք եկեղեցիներին են յատուկ: Յոհաննայ վանքը յիշւում է 603–606 թ. թ. վաւերական եւ ժամանակակից թղթերի մէջ:*** Ապա ուրեմն խորին հնութեան հիմք ունի այն աւանդութիւնը, թէ նա շինուած է Լուսաւորչի ձեռքով, ուրեմն Դ. դարի սկզբում: Օշականի եկեղեցին նոյնպէս բազիլիկայ էր, յատակագծի մնացորդներից դատելով, այլ եւ նկարիչ Կուճիկեանի ձեռքով պատրաստուած նկարից, որ այժմ գտնւում է էջմիածնի մատենադարանում. այդ եկեղեցին յիշւում է Ե. դարի առաջին կիսում, Ս. Մեսրոպի թաղման առթիւ:†

Աղիվարդի, նաեւ Եղուարդ կոչուած, երկու բազիլիք եկեղեցիները մեզ յայտնի դարձան Խաչիկ վարդապետի պեղումներով, մէկը երեք նաւանի, ոչ ուշ քան Զ. դարի կէսերը, իսկ միւսը մէկ նաւանի, աւելի հին: Հին դերեզմանատանը, բլրի վերայ, կայ երրորդ մի նաւանի մատուռ, կիսախոյակների քանդակներով նման Քասախին կամ Տեկորին: Գառնիի եկեղեցին նոյնպէս բազիլիկայ է, մնացած է հիւսիսային պատը իւր որմայեցներով եւ այլ մնացորդներ: Փարպիից յիշատակուած են երեք հայրեր, երկու բազիլիկաների աւերակները գոյութիւն ունին մինչեւ այսօր, մէկը Տեկորի եւ Քասախի նման խոյակներով, իսկ միւսը մի նաւանի, ԺԳ. դարում բերդի վերածուած, եւ հաստ պատերով ամրացուած դրսից, ուստի եւ աւելի լաւ պահուած լուսամուտների շատ արխայիկ կամարներով, հաւասարակող խաչերով եւ այլն:

Աղցի եկեղեցու հետքերը ցոյց են տալիս, որ նա մէկն է մեր հնագոյն բազիլիկ եկեղեցիներից. Նրա մօտի ստորերկրեայ շէնքը Դ.–Ե. դարի գործ, դէմ առ դէմ երկու դերեզմաններ պատի մէջ փորուած, կատակոմբաների նման, կողքերի սալաքարերը քանդակներով ծածկուած. Հարաւայինը երկու բաժանմունքով. մէկը հաւասարակող խաչէ պսակի մէջ (Պատկ. 12), հորիզոնական թեւերին դէմ առ դէմ մի մի աղաւնի, բոլորակի մակերեւոյթը ծածկուած որթատունկի ողկոյզով, ծիլով եւ տերեւով:* Միւսը մարդկային մի մերկ ֆիգուր, որ նետահար է արել դիմացի վարազին:

Հիւսիսային դամբարանի սալաքարի քանդակը բուսական է եւ բոլորովին եզակի հայ հին քանդակագործութեան մէջ: Տարաբաղդաբար մեր ջանքերը պայծառ լուսանկարելու, առանց լուսաւորութեան միջոցների, անյաջող անցան. իսկ բոլորակի մէջ խաչը լուսանկարուած է Աշխարբէկի էստամբաժից: Դամբարանի մատրան դրան կողաքարերի եւ կամարի վերայի քանդակները կենդանիների շարքով եւ ճակատի փոքրիկ հաւասարակող խաչով, նոյնպէս նո–

*Գիրք թղթոց. եր. 151:

**Պատկ. 11 համեմատելի Երերոյքի հարաւ արեւելեան դրան կողասիւներին. Strz. 413, աւելի ճիշդ Իրինգի. 133. եր.

***Գիրք թղթոց. եր. 111:

†Կորիւն եր. 45. Վենետիկ:

*Տես մեր «Հաւուց Թառի Ամենափրկիչը», Երուսաղէմ. 1937, եր. 47: